Հարկ չհամարեցի միւս Զամախաբնակ ազգերի թիւն ու հաշիւը գրել. միայն անշնորհք հայ նեստորականաց թէ բողոքականաց տանց թիւն իմացայ, որ 67 է, որք ունին մի ժողովարան, մի դպրոց և մի ծխական տաք, որ է ուսուցիչ և քարոզիչ և պաստոր։ Աղանդոյս հիմնադիր Սարգիս վարպետ Համբարձումեանն բաւական համբերութեամբ 1850 թուիցը պահպանելով աղանդապետութեան պաշտօնը և աղանդաւորաց ժողովը, այս 1891 թուին մեռաւ, և պատկերատեաց աղանդաւորները, որ մեր Փրկչի, և Առաքելոց, և Ս. Լուսաւորչի պատկերներն արհամարհում են, մեռած Սարգիս վարպետի պատկերը լուսանկարով նկարել տալով, ամեն մէկը գրեց իւր սեղանի վրայ կամ կախեց պատիցը, որոյ համար յանդիմանելուս՝ պապանձվում էին։

Զամախուոյ հայք ունին երկդասեան երկսեռ ուսումնարան 70 աշակերտաք և 60 աշակերտուհիք. ուսումնարանն ունի և դրադարան - ընթերցարան 6 ձեռագիր և 450 տպագիր մեծ ու փոքր զանազան հայ և ռուս գրքերով։

Իւրաքանչիւր դպրոցի ուսումնական վարչութիւնը բաղկանում է մի աւագ ուսուցչից և երեք ուսուցչից և երեք ուսուցչուհիներից, որք աւանդում են հայ և ռուս լեզուաց բոլոր առարկայքը, և վարձատրւում են 3500 ռուբլի ռօճկով՝ հաստատուած Ա և Բ կոպարի հաշուով. իսկ յիշեալ դպրոցաց տնտեսական վարչութիւնն բաղկացած է առանձին առանձին հոգաբարձութիւնից, որոց նախագահներն ընդ միշտ համաձայն դպրոցական կանոնադրութեանն՝ են և պէտք է լինին տեղական քահանայք։

Նոյնպէս և կրօնուսոյցք պէտք է լինին քահանայք։

Դպրոցներս կառավարւում են Ա. եկեղեցական արդիւնքով, Բ. պսակադրամներով[1]), Գ. ծննդական վկայականաց (մէտրիք) տր-

---

[1]) Պսակադրամներից սահմանուած է յօգուտ թեմական դպրանոցին Զամախու թեմի՝ որ ցայսօր համարվում է Զամախի քաղաքի դպրոցը՝ մի մի ռուբլի. իսկ մետրիքներից սահմանուած է 3,3 ռուբլի, որ առանում է կոնսիստորի միջոցաւ։